**2021, № 2, 25-37** *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.2.025

# ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

ԳԱՌՆԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Սահմանադրական բարեփոխումների եղանակով քաղաքական ցնցումների, հասարակական կամ քաղաքական բաժանումների և միանձնյա կառավարման համակարգի հաստատման լավագույն օրինակներից են 2003-2018 թթ. Ադրբեջանում իրականացված սահմանադրական հանրաքվեները:

Հոդվածում վերլուծված են Ադրբեջանի սահմանադրության փոփոխությունները, ցույց է տրված դրանց անմիջական կապը նախագահի լիազորությունների ընդլայնման հետ, որի նպատակն ի վերջո Ալիևների դինաստիական նախագահությունն ամրապնդելն էր: Հոդվածում մանրամասն ներկայացված են նաև միջազգային կազմակերպությունների դիտողությունները, կարծիքներն ու առաջարկները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված Ադրբեջանի նախագահի լիազորությունների ընդլայնմանը, որի գագաթնակետը 2016 թվականի սեպտեմբերի 26-ն էր: Վենետիկի հանձնաժողովի տված կարծիքում հատուկ ուշադրություն էր հրավիրված Ադրբեջանի նախագահի լիազորությունների էլ ավելի ընդլայնման, խորհրդարանի ու դատական համակարգի վրա: Նշվել էր, որ այս փոփոխություններով թուլանալու էր վերջիններիս անկախությունը, և դրանք կենտրոնանալու էին նախագահի արդեն իսկ շատ հզոր ձեռքերում: Հաշվի չառնելով անգամ միջազգային կազմակերպությունների կարծիքը՝ Իլհամ Ալիևը «թաղեց» Ադրբեջանական Հանրապետության՝ ժողովրդավարության ճանապարհին հայտնվելու թվացյալ ջանքերը:

**Բանալի բառեր** – *Ադրբեջանի սահմանադրություն, Վենետիկի հանձնաժողով, հանրաքվե, նախագահ, Միլլի մեջլիս, բարեփոխում, լիազորություններ, սահմանադրական նորմ*

Սահմանադրական բարեփոխումների եղանակով քաղաքական ցնցումների, հասարակական կամ քաղաքական բաժանումների և միանձնյա կառավարման համակարգի հաստատման լավագույն օրինակներից են 2003-2018 թթ. Ադրբեջանում իրականացված սահմանադրական հանրաքվեները:

Հոդվածում վերլուծված են Ադրբեջանի սահմանադրության փոփոխությունները, ցույց է տրված դրանց անմիջական կապը նախագահի լիազորությունների ընդլայնման հետ, որի նպատակն ի վերջո Ալիևների դինաստիական նախագահությունն ամրապնդելն էր: Հոդվածում մանրամասն ներկայացված են նաև միջազգային կազմակեր-

պությունների դիտողությունները, կարծիքներն ու առաջարկները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված Ադրբեջանի նախագահի լիազորությունների ընդլայնմանը, որի գագաթնակետը 2016 թվականի սեպտեմբերի 26-ն էր: Վենետիկի հանձնաժողովի տված կարծիքում հատուկ ուշադրություն էր հրավիրված Ադրբեջանի նախագահի լիազորությունների էլ ավելի ընդլայնման, խորհրդարանի ու դատական համակարգի վրա: Նշվել էր, որ այս փոփոխություններով թուլանալու էր վերջիններիս անկախությունը, և դրանք կենտրոնանալու էին նախագահի արդեն իսկ շատ հզոր ձեռքերում: Հաշվի չառնելով անգամ միջազգային կազմակերպությունների կարծիքը՝ Իլհամ Ալիևը «թաղեց» Ադրբեջանական Հանրապետության՝ ժողովրդավարության ճանապարհին հայտնվելու թվացյալ ջանքերը:

Սահմանադրությունն այնպիսի նորմատիվ ակտ է, որը կարգավորում է հասարակական կյանքի առավել կարևոր և բարդ ոլորտները, այդ իսկ պատճառով իրավունքի համակարգում այն ձեռք է բերում առաջնակարգ տեղ: Ըստ էության սահմանադրական իրավունքից է սկսվում ազգային իրավունքի ողջ համակարգի, դրա բոլոր ճյուղերի ձևավորումը[1]: Սահմանադրությունը նաև իրավական համակարգի հիմքն է, ուստի կարելի է պնդել, որ Սահմանադրութունը պետության ողնաշարն է:

Սահմանադրական բարեփոխումների գործընթացը ներառում է բոլոր շահագրգիռ կողմերին, մասնավորապես՝ իշխանական և ընդդիմադիր քաղաքական կուսակցություններին, քաղաքացիական հասարակությանը: Այս համատեքստում դերակատարները, որոնք սովորաբար լինում են իշխանության ներակայացուցիչները, պետք է ներկայացնեն բարեփոխումների այնպիսի փաթեթ, որը բխի ոչ թե իշխանության միակողմանի շահերից, այլև ներառի ընդդիմության համար ընդունելի դրույթներ: Քաղաքական կուսակցությունները կարևոր դեր են խաղում սահմանադրության նախագծի մշակման կամ վերափոխման գործընթացում: Մարդկանց իդեալները արտացոլող բարեփոխման գործընթացների հաջողությունը կամ ձախողումը մեծապես կախված է քաղաքական կուսակցությունների գործունեությունից[2]: Հակառակ դեպքում կարող են առաջանալ քաղաքական ցնցումներ և խորացնել հասարակական կամ քաղաքական բաժանումները[3]:

Սահմանադրական բարեփոխումների եղանակով քաղաքական ցնցումների, հասարակական կամ քաղաքական բաժանումների և միանձնյա կառավարման համակարգի հաստատման լավագույն օրի-

---

[1] Տե՛ս **Ն. Այվազյան** և ուրիշներ, ՀՀ սահմանադրական իրավունք, ԵՊՀ, Եր., 2008, էջ 15:

[2] Տե՛ս **Martin van Vliet, Winluck Wahiu, Augustine Magolowondo**, Constitutional Reform Processes and Political Parties, Netherlands, 2012, էջ 14:

[3] Տե՛ս **Michele Brandt, Jill Cottrell, Yash Ghai, Anthony Regan**, Constitution-making and Reform, Switzerland, 2011, էջ 25:

նակներից է 2003-2018 թթ. Ադրբեջանում իրականացված սահմանադրական հանրաքվեները:

Ադրբեջանական Հանրապետության սահմանադրությունը ընդունվել է 1995 թ. նոյեմբերի 12-ին: Այն փոփոխվել է 3 անգամ՝ 2002 թ. օգոստոսի 24-ին, 2009 թ. մարտի 18-ին և 2016 թ. սեպտեմբերի 26-ին[4]:

Սահմանադրությունը բաղկացած է 5 մասերից, 12 գլուխներից և 158 հոդվածներից, սակայն ավելի լավ պատկերացում կազմելու համար հարկավոր է խորը ուսումնասիրել Ադրբեջանի բոլոր 3 սահմանադրական փոփոխությունները:

Նախքան Իլհամ Ալիևի՝ 2003 թ. հոկտեմբերի 15-ին Ադրբեջանի նախագահ ընտրվելը 2002 թ. տեղի ունեցան մի շարք առանցքային ու կարևոր քաղաքական վերադասավորումներ, որոնք էական նշանակություն ունեցան Ադրբեջանի ներքաղաքական կյանքում ու նպաստեցին Իլհամ Ալիևի երկարամյա կառավարմանը:

2002 թ. օգոստոսի 24-ին տեղի ունեցավ նոր հանրաքվե, իսկ 2003 թվականի օգոստոսի 4-ին Միլլի մեջլիսը Ալիևի թեկնածությանը վարչապետի պաշտոնում հավանություն տվեց[5]:

Կատարվեցին սահմանադրական մի շարք նորմերի փոփոխություններ, մասնավորապես, 3-րդ, 27-րդ, 88-րդ, 105-րդ, 125-րդ, 132-րդ, 142-րդ և այլ հոդվածներում[6]: Դրանցից էական է հատկապես 105-րդ հոդվածը, որը մեծապես նպաստեց իշխանությունը գրեթե անցնցում Իլհամ Ալիևին փոխանցելու, ինչպես նաև ալիևյան կլանի քաղաքական վերարտադրումը ապահովելու հարցում: Խոսքը վերաբերում է Ադրբեջանի Հանրապետության նախագահի լիազորությունների փոխանցմանը վերջինիս պաշտոնից հեռանալուց հետո:

Այնինչ Ադրբեջանի 1995 թ. նոյեմբերի 12-ի սահմանադրության 105-րդ հոդվածում նշված էր, որ եթե նախագահը վաղաժամկետ պաշտոնից հեռանա, ապա երեք ամսվա ընթացքում պետք է անցկացվեն Ադրբեջանի Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություններ, Նախագահի վաղաժամ պաշտոնից հեռացումը կարող էր լինել ինչպես առողջական խնդիրների, այնպես էլ մահվան դեպքում: Այս դեպքում, մինչև Ադրբեջանի Հանրապետության նոր նախագահ ընտրվելը, Ադրբեջանի նախագահի լիազորություններն իրականացնում էր Ադրբեջանի Միլի մեջլիսի նախագահը:

Այս իրավիճակում շտապ անհրաժեշտություն առաջացավ իրավական առումով ապահովել իշխանության անցումը Հեյդար Ալիևից իր որդուն՝ Իլհամ Ալիևին: Իհարկե, իշխանությունը լավ գիտակցում էր,

---

[4] Տե՛ս "Bu gün Azərbaycanda Konstitusiya Günüdür", https://report.az/siyasi-xeberler/daxili-siyaset/bu-gun-azerbaycanda-konstitusiya-gunudur3/, հասանելի է 20.05.2020:

[5] Տե՛ս "İlham Heydər oğlu Əliyev", https://cabmin.gov.az/az/page/78/, հասանելի է 22.05.2020:

[6] Տե՛ս Azərbaycan Respublikasi Konstitusiya Məhkəməsinin, "Azərbaycan Respublikasının Konstitusiyasında dəyişikliklərin edilməsinə dair", Azərbaycan, 2002, էջ 2:

որ չեն կարող միայն 105-րդ հոդվածի համար անցկացնել հանրաքվե, այդ իսկ պատճառով կազմակերպվեց 2 տասնյակից ավելի հոդվածների, այդ թվում 105-րդի փոփոխությունները[7]:

Սահմանադրական փոփոխությունները բարեհաջող ավարտելուց հետո հարկավոր էր ավարտին հասցնել Ալիևների կլանի վերարտադրումը: Եվ ահա 2003 թ. օգոստոսի 4-ին Միլլի մեջլիսը հավանություն է տալիս Իլհամ Ալիևին Ադրբեջանի վարչապետ նշանակելու հարցին[8]:

Այսպիսով Ադրբեջանում 2002 թ. օգոստոսի 24-ին կայացած սահմանադրական հանրաքվեն Ալիևների կառավարման շարունակականության ու Իլհամ Ալիևի մոտ 2 տասնամյակ նախագահելու սկիզբ դրեց:

Իլհամ Ալիևը իր դինաստիական նախագահությունն ամրապնդելու նպատակով նախաձեռնեց Ադրբեջանի սահմանադրական 2-րդ հանրաքվեն, որը տեղի ունեցավ 2009 թ. մարտի 18-ին:

Փոփոխության ենթարկվեց մոտ 30 հոդված[9]:

Առանցքային էր 101-րդ հոդվածի 5-րդ կետի փոփոխությունը, որը ստացել էր 91,73 % ձայն[10]:

Փոփոխությանը անդրադարձել էր Վենետիկի հանձնաժողովը[11], որը մարտի 18-ին սպասվող սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ 9 էջից բաղկացած կարծիք հրապարակեց[12]:

Վենետիկի հանձնաժողովի 2009 թ. մարտի 6-ին հրապարակած կարծիքի «**Ընդհանուր դիտողություններ և ընթացակարգի հարցեր**» բաժնի 5-րդ կետում նշվում է, որ քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ և որոշ քաղաքական դերակատարներ ափսոսանք են հայտնել բավարար քննարկումներ չկազմակերպելու և հանրային կարծիքը հաշվի չառնելու համար[13]: Հանձնաժողովը 11-րդ (հոդվածներ 152-155) և 12-րդ գլուխներում (հոդվածներ 156-158) ամրագրված փոփոխությունների վերաբերյալ նշել է, որ դրանք ենթակա չեն հանրաքվեի, այլ պետք է ընդունվեն որպես սահմանադրական օրենքներ՝ բարդացված ընթացակարգով:

Բացի վերը նշված հոդվածներից՝ Վենետիկի հանձնաժողովը մի

---

[7] Տե՛ս Azərbaycan Respublikasının referendum aktı, “Azərbaycan Respublikasının Konstitusiyasında dəyişikliklər edilməsi haqqında”, Azərbaycan, 2002:

[8] Տե՛ս “İlham Əliyev - Azərbaycan Respublikasının Prezidenti”, https://report.az/persona/ilham-%C9%99liyev/, հասանելի է 22.05.2020:

[9] “Azərbaycan Respublikasi Mərkəzi Seçki (referendum) Komissiyasinin qərari”, http://www.e-qanun.az/framework/16448, հասանելի է 01.06.2020:

[10] Տե՛ս “Все дополнения и изменения к 29 статьям Конституции Азербайджана были поддержаны избирателями – предварительные результаты ЦИК”, https://www.trend.az/azerbaijan/politics/1442873.html, հասանելի է 01.06.2020:

[11] Տե՛ս “Draft Amendments to the Constitution of the Republic of Azerbaijan”, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2009)025-e, հասանելի է 01.06.2020:

[12] Տե՛ս European Commission for democracy through law, “Draft opinion on the draft amendments to the constitution of the Republic of Azerbaijan”, Strasbourg, 2009:

[13] Տե՛ս European Commission for democracy through law, “Draft opinion on the draft amendments to the constitution of the Republic of Azerbaijan”, Strasbourg, 2009, էջ 2:

ամբողջ ենթաբաժնով՝ «**Բարեփոխումների արդյունքում բարձրացված հիմնական խնդիրները**», անդրադարձել է խնդրահարույց 101-րդ հոդվածի 5-րդ կետի փոփոխությանը՝ մատնանշելով նախագահի երկու անգամ անընդմեջ ընտրվելու սահմանափակումը: Պետությունների մեծ մասում, նաև Եվրոպայից դուրս, սահմանադրությամբ սահմանափակվում է նախագահի՝ 1 կամ 2 անգամից ավելի անընդմեջ ընտրվելու հնարավորությունը: Սահմանափակումներն ընդունվել են ինչպես այն երկրներում, որտեղ նախագահը տիրապետում է ընդարձակ լիազորությունների, այնպես էլ այն երկրներում, որտեղ նախագահի դերը ավելի արարողակարգային է: Ներկայումս Բելառուսը եվրոպական միակ նախագահական հանրապետությունն է, որը չունի որևէ սահմանափակում նախագահ ընտրվելու անընդմեջ քանակի առումով: Ի հավելումն սրա՝ նշվում է, որ Ադրբեջանը, որի սահմանադրությունը նախատեսում է նախագահական կառավարման համակարգ, մի երկիր է, որտեղ նախագահն իր ձեռքում է կենտրոնացնում լայն լիազորություններ: Ուստի տրամաբանական է, որ Ադրբեջանի սահմանադրության բնօրինակ տեքստը նախատեսում էր հանել առավելագույնը 2 ժամկետով նախագահության սահմանափակումը:

Սահմանադրական այս փոփոխությունների վերաբերյալ «Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի» հրատարակած հոդվածում նշվում էր, որ, հանրաքվեից առաջ անցկացված հարցումները ցույց էին տվել, որ չնայած քարոզարշավին, շատ մարդիկ անտեղյակ էին այն ընտրություններից, որոնց պետք է մասնակցեին: 20 հարցվողներից առնվազն 3-ը ենթադրում էին, որ մարտի 18-ին երկիրը կընտրի նոր խորհրդարան: Մյուսներն ասում էին, որ այդ օրը կորոշվի նախագահ Ալիևին ցմահ լիազորություններ տալու հարցը, և միայն 2-3 հարցվողներ քիչ թե շատ տեղյակ էին առաջիկա իրադարձության էությունից[14]: Ավելին, Մարդու իրավունքների տուն-հիմնադրամը ներկայացված զեկույցում նշել էր, որ Ադրբեջանական Հանրապետության սահմանադրական հանրաքվեն անցել է ահաբեկման և վախի մթնոլորտում: Հիմնադրամը նաև արձանագրել է, որ հապճեպ իրանակացված հանրաքվեն երբեք չի ենթարկվել հասարակական բովանդակալից քննարկման, ինչը թույլ կտար բարձրացնել սահմանադրական բարեփոխումներին վերաբերող կարևոր մտահոգությունները[15]: Բացի այդ, արձանագրվել են նաև լուրջ ընտրախախտումներ: Ինչպես հայտնել է ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության ներկայացուցիչ Արիֆ Հաջըլը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում, մարդկանց ավտոբուսով են բերել տարբեր

[14] Տե՛ս “Азербайджанская оппозиция критикует поправки к конституции”, https://iwpr.net/ru/global-voices/azerbaydzhanskaya-oppoziciya-kritikuet, հասանելի է 03.06.2020:

[15] Տե՛ս “Azerbaijan: Referendum in an atmosphere of intimidation and fear ”, https:// humanrightshouse.org/articles/azerbaijan-referendum-in-an-atmosphere-of-intimidation-and-fear/, հասանելի է 03.06.2020:

ընտրատեղամասեր, ուստի նրանք քվեարկել են մեկից ավելի անգամ[16]:

2009 թ. մարտի 18-ի սահմանադրական հանրաքվեի շրջանակներում ներկայացված փոփոխությունները համարվեցին ընդունված: Ըստ այդմ՝ գործող նախագահին ընձեռվեցին լայն հնարավորություններ՝ հեշտությամբ օգտագործելու տարբեր միջոցներ՝ իր դիրքն ամրապնդելու և, իր վերընտրությունը ապահովելու համար (դրա վկայությունը 91.76% ձայն ստանալն է)[17]: Փաստորեն, սա 2002 թ. սահմանադրական հանրաքվեին հաջորդող 2-րդ հանրաքվեն էր, որով հիմք դրվեց նախագահի լիազորությունների գերկենտրոնացմանը:

Սակայն սրանով սահմանադրական հանրաքվեի փաթեթը ոչ միայն լիարժեք չէր, այլև 2016 թ. սահմանադրական «բարեփոխումներ» իրականացնելու հիմք դարձավ:

Ադրբեջանի Հանրապետության իրավական ողնաշարը՝ Սահմանադրությունը, 3-րդ անգամ «ոտնձգության» ենթարկվեց, երբ Իլհամ Ալիևը 2016 թ. հուլիսի 18-ին ստորագրեց սահմանադրական փոփոխությունների փաթեթը Սահմանադրական դատարան ուղարկելու հրամանագիրը[18]: Ավելի ուշ՝ հուլիսի 25-ին, Սահմանադրական դատարանը հաստատեց սահմանադրական փոփոխությունների փաթեթը[19]: Իսկ արդեն հաջորդ օրը՝ հուլիսի 26-ին, Ալիևը ստորագրեց փոփոխությունների փաթեթը համընդհանուր քվեարկության դնելու մասին հրամանագիրը[20]:

Այս սահմանադրական հանրաքվեով Իլհամ Ալիևը մի քանի հոդվածների փոփոխությամբ ու ներդրմամբ իրավական հենք ապահովեց Ալիևների իշխանության երկարակեցության ու մշտակառավարման համար:

1. 2016 թ. սեպտեմբերի 26-ին փոփոխություններ կատարվեցին մի շարք հոդվածներում, որոնք չեն վերաբերում նախագահի լիզորությունների ընդարձակմանը. մասնավորապես՝ հոդված 24-ը («Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հիմնական սկզբունքը»), հոդված 29-ը («Սեփականություն իրավունքը»), հոդված 36-ը («Գործադուլի իրավունքը»), հոդված 60-ը («Իրավունքների և ազատությունների վարչական և դատական երաշխիքը»), ինչպես նաև հոդված 71-ը («Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ե-

---

[16] “В Азербайджане оппозиция заявляет о серьезных нарушениях в ходе голосования на референдуме”, https://regnum.ru/news/polit/1138958.html, հասանելի է 03.06.2020:

[17] Տե՛ս “Ümumxalq səsverməsinə çıxarılmış referendum aktının layihəsi üzrə səslərin hesablanmasının nəticələri”, https://web.archive.org/web/20130120102817/http://www.infocenter.gov.az/v3/referendum_09.php, հասանելի է 03.06.2020:

[18] Տե՛ս “Azərbaycan Respublikasının Konstitusiyasında dəyişikliklər edilməsi haqqında”, https://president.az/articles/20630, հասանելի է 04.06.2020:

Տե՛ս [19] “Конституционный суд утвердил изменения в Конституцию Азербайджана”, https://az.sputniknews.ru/azerbaijan/20160725/406543543.html, հասանելի է 04.06.2020:

Տե՛ս [20] “Azərbaycan Respublikasının Konstitusiyasında dəyişikliklər edilməsi məqsədi ilə ümumxalq səsverməsi (referendum) keçirilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı”, https://president.az/articles/20703, հասանելի է 04.06.2020

բաշխավորումը») և այլն:

2. 2016 թ. սահմանադրական հանրաքվեով 101-րդ հոդվածի 1-ի կետը փոփոխությունների ենթարկվեց. սահմանվեց, որ նախագահն ընտրվում է 7 տարի ժամկետով[21](2009 թ. փոփոխություններով 5 էր):

3. Ադրբեջանի նախագահի լիազորությունների գերխիստ ընդարձակման լավագույն օրինակներից է նոր՝ 98.1 հոդվածի ներմուծումը սահմանադրության մեջ: Այս հոդվածով նախագահը կարող է ցրել Միլլի մեջլիսը, եթե վերջինս տարվա ընթացքում երկու անգամ անվստահություն է հայտնում կառավարությանը կամ օրենքով սահմանված ժամկետում Ադրբեջանական Հանրապետության նախագահի կողմից երկանգամյա ներկայացումից հետո չի նշանակում Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Գերագույն դատարանի և Կենտրոնական բանկի կոլեգիալ գործունեության համար անհրաժեշտ թվով թեկնածուներ, ինչպես նաև անհաղթահարելի պատճառներով չի կատարում սահմանադրության 94-րդ և 95-րդ հոդվածներով, 96-րդ և 97-րդ հոդվածների II, III, IV և V մասերով նախատեսված պարտավորությունները[22]:

Ավելին, ներդրվում է ևս մեկ սահմանադրական նորմ՝ 103.1-րդ հոդվածը, այն է՝ Ադրբեջանական Հանրապետության փոխնախագահների ինստիտուտը[23]: Սույն հոդվածով նախագահը ստեղծում է փոխնախագահների պաշտոնները ու ինքն իրեն լիազորում վերջիններիս նշանակումն ու ազատումը: Փոխնախագահների պաշտոնին նշանակվում են ընտրելու իրավունքով, բարձրագույն կրթությամբ, այլ պետությունների նկատմամբ պարտավորություններ չունեցող Ադրբեջանի քաղաքացիները: Ավելին, 106.1[24] հոդվածով սահմանվեց նաև փոխնախագահների անձեռնմխելիությունը: Իսկ 108.1 հոդվածով[25] Ադրբեջանի Հանրապետության առաջին փոխնախագահի և նրա ընտանիքի հոգածությունը իրականացվում է պետության հաշվին, ինչպես, օրինակ՝ նախագահինը:

Հատկանշական է, որ փոխնախագահների պաշտոնների ստեղծումը լուծեց կարևորագույն 2 խնդիր: Դրանցից առաջինը իր՝ Ալիևի՝ նախագահի վաղաժամ հեռանալու դեպքում ընտանեկան կառավարումը չկորցնելն էր, իսկ երկրորդը 2017 թ. փետրվարի 21-ին կնոջը՝ Մեհրիբան Ալիևային առաջին փոխնախագահի պաշտոնին նշանակելն էր[26]:

---

[21] Տե՛ս Конституция Азербайджанской Республики, էջ 25:

[22] Տե՛ս նույն տեղը, էջ 25:

[23] Տե՛ս նույն տեղը, գլուխ 6, էջ 26:

[24] Տե՛ս Конституция Азербайджанской Республики, Азербайджан, Глава 6, 2016, էջ 27:

[25] Տե՛ս նույն տեղը, գլուխ 6, էջ 28:

[26] Տե՛ս "M.A.Əliyevanın Azərbaycan Respublikasının Birinci vitse-prezidenti təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı", https://president.az/articles/22850, հասանելի է 06.06.2020:

Ընտանեկան կառավարումը չկորցնելուն էր միտված սույն սահմանադրական բարեփոխումների շրջանակում 105-րդ հոդվածը՝ այն է՝ Ադրբեջանական Հանրապետության նախագահի լիազորությունների կատարումը նրա՝ պաշտոնից հեռանալուց հետո:

Դեռևս 2002 թ. սահմանադրական հանրաքվեի ժամանակ սույն հոդվածը փոփոխության ենթարկվեց, որի արդյունքում, եթե նախագահը առողջական կամ այլ պատճառներով լիազորությունները չէր կարողանալու կատարել, երկրի կառավարումը իրականացվում էր վարչապետի կողմից. այն ժամանակ վարչապետ էր նշանակվել Իլհամ Ալիևը:

Արդեն 2016 թ. սեպտեմբերի 26-ից 105.1 հոդվածի[27] փոփոխմամբ վերոնշյալ պատճառների առկայության դեպքում նախագահի լիազորությունները պետք է իրականացներ Ադրբեջանի առաջին փոխնախագահը, իսկ արտահերթ ընտրություններ անցկացնելու պահանջը 3 ամսից կրճատվեց 60 օրվա:

Առանձին դիտարկման է արժանի նաև 100-րդ[28] հոդվածը՝ Ադրբեջանական Հանրապետության նախագահի թեկնածուներին ներկայացվող պահանջները, համաձայն որոնց, եթե նախկինում նախագահ կարող էր ընտրվել 35 տարեկանից ոչ երիտասարդ թեկնածուն, ապա 2016 թ. փոփոխմամբ այդ շեմը վերացվեց: Այժմ նախագահ կարող է ընտրվել ընտրելու իրավունք ունեցող ցանկացած անձ:

Փաստենք, որ ընդհանուր առմամբ 2016 թ. սեպտեմբերի 26-ին սահմանադրական հանրաքվեի միջոցով փոփոխման է ենթարկվել մոտ 30 սահմանդրական նորմ[29]:

ԱՄՆ պետդեպարտամենտը անհանգստություն էր հայտնել Ադրբեջանում տեղի ունեցող զարգացումների կապակցությամբ և վերջինիս հորդորել սահմանադրական փոփոխությունները ներկայացնել Վենետիկի հանձնաժողով և ԺՀՄԻԳ՝ համատեղ կարծիքի համար[30]: Սակայն Ադրբեջանի կառավարությունը այդպես էլ չդիմեց Վենետիկի հանձնաժողով[31]:

Հայտնի է, որ վերջինս կարող է այս կամ այն իրավական փոփոխության կամ իրավական հիմք ունեցող այլ փոփոխությունների կամ այլ բնույթի փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական կարծիք հայտնել միայն այն դեպքում, երբ առկա է պաշտոնական դիմում: Այս համատեքստում ԵԽԽՎ-ն որոշում էր կայացրել Ադրբեջանում սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ դիմում ուղղարկել Վենե-

---

[27] Տե՛ս Конституция Азербайджанской Республики, էջ 27:

[28] Տե՛ս նույն տեղը, էջ 25:

[29] Տե՛ս "Акт референдума Азербайджанской Республики «О внесении изменений в Конституцию Азербайджанской Республики»", https://azertag.az/ru/xeber/Akt_referenduma_Azerbaidzhanskoi_Respubliki_O_vnesenii_izmenenii_v_Konstituciyu_Azerbaidzhanskoi_Respubliki-977191, հասանելի է 04.06.2020:

[30] Տե՛ս "United States Troubled by Developments in Azerbaijan", https://2009-2017.state.gov/r/ pa/prs/ps/2016/08/261090.htm, հասանելի է 08.06.2020:

[31] Տե՛ս "Konstitusiyaya təkliflər Venesiya Komissiyasına verilməyib", https://www.azadliq.org/ a/27938170.html, հասանելի է 08.06.2020:

տիկի հանձնաժողով՝ մասնագիտական կարծիք ստանալու համար[32]:

Հիմք ընդունելով ԵԽԽՎ-ի դիմումը՝ 2016 թ. սեպտմբերի 20-ին Վենետիկի հանձնաժողովը նախնական եզրակացությամբ անդրադարձավ սահմանադրական փոփոխություններին[33]՝ դրանք բացասական գնահատելով: Նշել էր, որ այդ փոփոխությունները «հակասում են եվրոպական սահմանադրական ժառանգությանը»[34]:

Կարծիքի 52-րդ կետում նշվում էր, որ Վենետիկի հանձնաժողովը 2009 թվականի կարծիքի վերաբերյալ եզրափակիչ կետերում ընդգծել էր, որ երկու անգամից ավելի անընդմեջ ընտրվելու սահմանափակման վերացումը ամրապնդելու էր նախագահի արդեն իսկ ուժեղ դիրքը և դիտվում է որպես շատ բացասական զարգացում ժողովրդավարական պրակտիկայում[35]: Ինչպես նշվում է Եվրոպայի խորհրդարանական վեհաժողովի 2062 բանաձևում[36], Ադրբեջանի ինստիտուցիոնալ կառուցվածքը հատկապես ուժեղ լիազորություններ է տալիս հանրապետության նախագահին և գործադիրին: Ավելին, նշվել էր խորհրդարանի(Միլի մեջլլիս) սահմանափակ իրավասությունների, հասարակական կազմակերպությունների և անկախ լրատվամիջոցների խոցելիության և ընդդիմության ուժերի թուլության մասին: Ավելին, անդրադառնալով նույն՝ 101-րդ հոդվածի փոփոխություններին, նշվում է. «Նման պայմաններում 101-րդ հոդվածի փոփոխությունը, որը երկարացնում է Նախագահի մանդատը ավելի, քան եվրոպական փորձն է, երկու անգամ անդընդմեջ ընտրվելու նախկին սահմանափակման վերացման հետ մեկտեղ, կենտրոնացնում է իշխանությունը մեկ անձի ձեռքում այնպես, որ այն իշխանության բաժանման հետ համատեղելի չէ»[37]:

Վենետիկի հանձնաժողովն անդրադառնալով նոր՝ 98.1 հոդվածին՝ նշել էր, որ շատ ուժեղ նախագահը գերկառավարական ռեժիմով, լայն հայեցողություն ունի լուծարելու խորհրդարանը, որը կարող է խախտել երկու ճյուղերի միջև ուժերի հավասարակշռությունը: Այն ավելի է թուլացնում խորհրդարանը[38]: Որպես օրինակ է բերվում Կորեայի Հանրապետությունը: Նշվում էր, որ, երբ Կորեայում ավտորիտար ռեժիմ էր,

---

[32] Տե՛ս "Azerbaijan - Constitutional draft modifications are negative and "at odds with European constitutional heritage", https://www.venice.coe.int/webforms/events/?id=2302, հասանելի է 08.06.2020:

[33] Տե՛ս European Commission for democracy through law, "Azerbaijan preliminary opinion on the draft modifications to the constitution submitted to the referendum of 26 September 2016", Strasbourg, 2016:

[34] Տե՛ս Նույն տեղում, էջ 18:

[35] Տե՛ս European Commission for democracy through law, "Azerbaijan preliminary opinion on the draft modifications to the constitution submitted to the referendum of 26 September 2016", Strasbourg, 2016, էջ 12:

[36] Տե՛ս "The functioning of democratic institutions in Azerbaijan", http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=21953&lang=en, հասանելի է 08.06.2020

[37] Տե՛ս European Commission for democracy through law, "Azerbaijan preliminary opinion on the draft modifications to the constitution submitted to the referendum of 26 september 2016", Strasbourg, 2016, p. 12.

[38] Տե՛ս նույն տեղը, էջ 13:

նախագահն ուներ լիազորություն լուծարելու խորհրդարանը, սակայն ժողովրդավարություն հաստատելուց հետո նախագահի այդ լիազորությունը վերացվեց: **«Բարձրագույն դատավորներ նշանակելու ձախողումը»** բաժնում անդրադառնալով դատական համակարգի անկախությանը՝ նշվում էր, որ 98-րդ հոդվածի 1-ի մասը լուրջ սպառնալիք է դատական համակարգի անկախությանը, քանի որ խորհրդարանի լուծարման մեկ այլ հիմքը խորհրդարանի՝ Սահմանադրական դատարանի կամ Գերագույն դատարանի դատավորի պաշտոնում նախագահի կողմից առաջարկված անձի թեկնածությունը հաստատելու մասին առաջարկը երկրորդ անգամ, մերժելն է[39]: Այս նոր դրույթը խորհրդարանի լիազորությունները դարձնում է անարդյունավետ: Լուծարման ռիսկի ճնշման տակ խորհրդարանը չի համարձակվի նախագահի առաջադրած թեկնածուին «դեմ» քվեարկել: Սա, ըստ էության, ավելի է մեծացրել դատական համակարգի կախվածությունը Ադրբեջանի նախագահից:

Վենետիկի հանձնաժողովը նոր՝ 103.1 հոդվածի վերաբերյալ նկատել էր, որ նախագծում չի նշվել ընտրվող փոխնախագահների թիվը, չէին տրված նաև փոխնախագահների լիազորությունները, ինչպես նաև առաջին փոխնախագահությունը մյուսներից տարբերելու մեխանիզմը: Ավելին, 71-րդ կետում ասվում էր, որ «փոխնախագահներ նշանակելու նախագահի լիազորությունը հազվադեպ, եթե ոչ եզակի սահմանադրական երևույթ է, որն էլ ավելի է մեծացնում նախագահի իշխանության դիրքը»[40]:

Անդրադառնալով փոփոխված հոդված 105-ին՝ հանձնաժողովը ընդգծել էր. «Եթե փոխնախագահները պատրաստվում են կառավարել, ապա նրանք պետք է ունենան ընտրական մանդատ և ոչ թե այդ պաշտոնին նշանակվեն նախագահի կողմից: Ավելին, քանի որ փոխնախագահները կարող են ժամանակավորապես իրականացնել նախագահի լիազորությունները՝ նոր նախագահական ընտրություններին ընդառաջ, նրանք արտոնյալ դիրքում կլինեն: Նախագահի՝ փոխնախագահ նշանակելու հնարավորությունը, հետևաբար, գործող նախագահին մեծ առավելություն է տալիս իր իրավահաջորդին ընտրելու ժամանակ»[41]:

Վենետիկի հանձնաժողովը «Եզրակացություններ» բաժնում հստակ դիրքորոշումներ է ներկայացրել 2016 թ. սեպտեմբերի 26-ի սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ՝ նշելով, որտեղ նշվում էր, որ համաձայն նախագծի՝ նախագահի նոր լիազորությունները աննախադեպ են նույնիսկ համեմատական առումով. դրանք կրճատում են նրա քաղաքական հաշվետվողականությունը և էլ ավելի թուլացնում խորհրդարանը:

---

[39] Տե՛ս նույն տեղը, էջ 15:

[40] Նույն տեղում, էջ 16:

[41] European Commission for democracy through law, “Azerbaijan preliminary opinion on the draft modifications to the constitution submitted to the referendum of 26 september 2016”, Strasbourg, 2016, p. 16:

Նախագահի կողմից խորհրդարանը ցրելը անարդյունավետ է դարձնում քաղաքական այլակարծությունը, որը նաև անդրադառնում է դատական համակարգի անկախության վրա, քանի որ այն նվազեցնում է խորհրդարանի դերը դատավորների հաստատման հարցում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Վենետիկի հանձնաժողովի տված կարծիքում հատուկ ուշադրություն էր հրավիրված Ադրբեջանի նախագահի լիազորությունների էլ ավելի ընդլայնման, խորհրդարանի ու դատական համակարգի վրա: Նշվել էր, որ այս փոփոխություններով թուլանալու էր վերջիններիս անկախությունը, և դրանք կենտրոնանալու էին նախագահի արդեն իսկ շատ հզոր ձեռքերում:

2016 թ. սեպտեմբերի 26-ի սահմանադրական բարեփոխումները չեն վրիպել միջազգային կազմակերպությունների աչքից: Amnesty International-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի փոխտնօրեն Դենիս Կրիվոշեևը հայտարարել է, որ հանրաքվեն ի սկզբանե ուղեկցվել է ձերբակալություններով և ահաբեկումներով: Նրանք, ովքեր փորձել են քննադատել և քարոզարշավ անցկացնել այս առաջարկների դեմ, ենթարկվել են իշխանությունների հարձակումներին և ոտնձգություններին[42]: Ավելին, ԱՄՆ-ի Հելսինկյան հանձնաժողովը 2016 թ. սեպտեմբերի 15-ին Ադրբեջանի նախագահ Ալիևին ուղղված նամակում նշել էր, որ սպասվող հանրաքվեն լեգիտիմության լուրջ ճգնաժամ է ստեղծում: Ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ ադրբեջանցի ժողովուրդը չեն կարող ունենալ վստահություն այն քվեարկության վերաբերյալ, որը տեղի է ունենում առանց տեղեկատվության հասանելիության, առանց բաց քննարկումների և թափանցիկության[43]:

Եվ այսպես, ամփոփելով Ադրբեջանի սահմանադրական բարեփոխումները, հիմք ընդունելով 2002 թ., 2009 թ. և 2016 թ. հանրաքվեները, կարելի է եզրակացնել, որ վերջիններս օգտագործվել են որպես միջոց նախագահի լիազորությունները ընդլայնելու ու ապահովագրելու համար: Ապահովվեց ինչպես նախագահի ինստիտուտի՝ Ալիևների վարչակարգի երկարակեցությունը, այնպես էլ թուլացվեց Միլլի Մեջլիսի որպես օրենսդիր մարմնի դերը: Հաշվի չառնելով անգամ միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը՝ Իլհամ Ալիևը «թաղեց» ժողովրդավարության ճանապարհին հայտնվելու փորձ անող Ադրբեջանական Հանրապետության թվացյալ ջանքերը: Բոլոր նախագահական ընտրությունների ժամանակ առանձնակի թիրախ են եղել ԶԼՄ դաշտի ներկայացուցիչները: Որոշ լրագրողներ դատապարտվել են ազատազրկման՝ անօրինական զենք պահելու և

---

[42] Տե՛ս "Azerbaijan: Assaults on freedom of expression mar constitutional referendum", https://www.amnesty.org/en/latest/news/2016/09/azerbaijan-assaults-on-freedom-of-expression-mar-constitutional-referendum/, հասանելի է 09.06.2020:

[43] Տե՛ս "Azerbaijan's constitutional referendum creates crisis of legitimacy", https://www.csce.gov/international-impact/press-and-media/press-releases/azerbaijan-s-constitutional-referendum-creates?sort_by=field_date_value&page=2, հասանելի է 09.06.2020:

հասարակական կարգի խախտումներ կազմակերպելու մեղադրանքով, ավելին, եղել են դեպքեր, երբ լրագրողին մեղադրանք էր առաջադրվել պետական ծառայողից կաշառք վերցնելու համար: Բոլոր այս գործողությունների տրամաբանության հիմքում ընկած է լրագրողի համար այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որ վերջինս անձնական անվտանգությունից ելնելով՝ չիրականացնի իր աշխատանքային պարտականությունները: Սա նաև լռեցնելու փորձված մեթոդ է, որը հնարավորություն է տալիս իշխանությանը խուսափելու քննադատությունից: Թեև եղել են լրագրողներ, որ արդարության համար պայքարել են, հասել ՄԻԵԴ ու արձանագրել իրենց իրավունքների խախտումները, սակայն նման դեպքերն այնքան սակավաթիվ են, որ տեսականորեն չունեն ազդող կամ իշխանությանը զսպող հետևանք:

Ադրբեջանի բոլոր 4 նախագահական ընտրությունները անցել են համատարած ընտրախախտումներով[44]: Իլհամ Ալիևի իշխանության ձգտումը 2003 թ. այնքան մեծ էր, որ ընտրություններից հետո ընդդիմադիրների հետ բախման գնալով՝ արձանագրվել է մահվան 2 դեպք, որոնցից 1-ը՝ երեխա:

Մնացած բոլոր ընտրությունները ընտրախախտումների տեսակով և բնույթով գրեթե չեն տարբերվել միմյանցից: Անհայտ անձինք ուղղորդում էին տարեցներին, ցուցակներում ավելացնում էին չգրանցված ընտրողների անուններ: Գրանցվել էին նաև ընտրողների վրա ճնշում գործադրելու, այդ թվում՝ գործադիր մարմնի կողմից ընտրողների հետ թեկնածուի հանդիպմանը արհեստական խոչընդոտներ ստեղծելու դեպքեր: Ադրբեջանի նախագահական ընտրություններն այնքան մեծ հովանավորչություն ունեին երկրի բարձրագույն ամբիոներից, որ դիտորդներին չէին թույլատրել մասնակցել ձայների հաշվարկին:

Հիմք ընդունելով փաստական և ապացուցողական վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ կարող ենք արձանագրել, որ ընդհանուր առմամբ Ադրբեջանը դեռ շա՛տ հեռու է ժողովրդավարությունից:

**ГАРНИК ДАВТЯН – *Конституционные реформы в Азербайджане как способ расширения полномочий президента.* –** В статье проанализированы изменения в Конституции Азербайджана, показана их прямая связь с расширением полномочий президента. При этом учтены мнения представителей оппозиционного блока, а также подробно представлены замечания и предложения международных организаций. Особое внимание уделено расширению полномочий президента страны, которые достигли своего пика 26 сентября 2016 года.

**Ключевые слова**: *Конституция Азербайджана, Венецианская комиссия, референдум, президент, Милли Меджлис, реформа, полномочия, конституционная норма*

**GARNIK DAVTYAN – *Constitutional Reforms in Azerbaijan as a Way to***

[44] Տե՛ս Human Rights Watch, “Crushing Dissent: Repression, Violence and Azerbaijan’s Elections”, USA, 2003:

***Expand the Powers of the President.*** – The article analyzes the changes in the Constitution of Azerbaijan, shows their direct connection with the expansion of the president's powers, and also takes into account the opinions of representatives of the opposition bloc in various episodes. The remarks, opinions, and proposals of international organizations are presented in detail. Particular attention was paid to the expansion of the powers of the President of Azerbaijan, which reached its peak in 2016 on September 26.

**Key words**: *Constitution of Azerbaijan, Venice Commission, referendum, president, Milli Majlis, reform, credentials, constitutional norm*